ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

3.05.2019
342-07

Երևանի քաղաքապետ
պարոն Հայկ Մարությանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարության,

2019 թվականի մայիսի 2-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (գրասենյակի հասցեն՝ Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ) «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ից ստացել է հարկային հաշիվ (Ա6350532538), որում պայմանագրով նախատեսված ամսական վճարից բացի ներառված է 2018 թ.-ի ընթացքում չգրված տույժեր 19016 ՀՀ դրամի չափով:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել

1. Աուդիտ ստուգումների արդյունքում հայտնաբերված 2018 թ.-ի ընթացքում չգրված տույժերի մանրամասները, ինչպես նաև, թե հարկային հաշվում ներկայացված 2818 օրը որ ժամանակահատվածին է վերաբերում:
2. Տեղեկություն այն մասին, թե ինչու է 2018 թ.-ի տուժերի հաշիվը ԻԱԿ-ին ներկայացվում միայն 2019 թ.-ի մայիսին:
3. Տեղեկություն այն մասին, ինչ հիմքով է տույժ ներկայացվում վճարումը մի քանի ամսով ուշացնելու համար, եթե տույժ ներառող հաշիվ ԻԱԿ-ը մինչ այդ չի ստացել:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

«Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի հրկային հաշիվը՝ կից:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուքան Դոլոյան